ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

06 հոկտեմբերի 2011 թվականի N 140-Ա

ք. Հրազդան

Կ. ՄԵՍՐՈՊՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 929-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2011 թվականի հոկտեմբերի 5-ի N 408-Ա որոշումը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Արգելի Վ. Անանյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N 6 որոշումը՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ.

1. ***Կարինե Մեսրոպյանին*** 2011 թվականի հոկտեմբերի 6-ից ազատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Արգելի Վ. Անանյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2005 թվականի հունիսի 22-ին կնքված N 53 աշխատանքային պայմանագիրը:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Արգելի Վ. Անանյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ ***Անահիտ Ասլանյանի*** վրա՝ մինչև տնօրենի թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում ընտրված տնօրենի կողմից զբաղեցնելը:

3. Առաջարկել դպրոցի խորհրդին՝ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Արգելի Վ. Անանյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի ընտրություն:

4. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ եռօրյա ժամկետում կազմակերպել դպրոցի հանձնման-ընդունման աշխատանքները:

5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ